ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ, ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ LSFINANCE (ԳԳՕ) ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ ՖՆ ՄԱԾՁԲ-17/20

ք. Երևան

20 դեկտեմբեր 2017թ.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Է. Գևորգյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ԼՍՈՖՏ>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Լ. Լալայանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է էլեկտրոնային գնումների պլանավորման, պայմանագրերի կառավարման և գնումների հաշվետվողականության և LSFinance (ԳԳՕ) համակարգերի տվյալների համադրման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 38500000 (երեսունութ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Պայմանագրի գումարն ամբողջությամբ Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ՝:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ու

ՀՀ ֆինանսների նախարարություն
Ք. Երևան, Մ. Ադամյան 1
ՀՎՀՀ 02629081
Հ/Հ 900011017101
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավար

------------------------ Է. Ֆևրոյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

<<ԼՍՈՖՏ>> ՍՊԸ
Ք. Երևան Բյուզանդի 1/3 7-րդ հարկ
ՀՎՀՀ 01202055
ՀՀ24100023278500
<Յունիբանկ> ՓԲԸ
Տնօրեն՝

------------------------ Լ. Լալայան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1
20 դեկտեմբեր 2017թ. կնքված
ՀՀ ՖՆ ՄԱԾՁԲ-17/20 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ծառայության տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման հասցեն	մատուցման ժամկետը
1	72261160/25	էլեկտրոնային գնումների պլանավորման, պայմանագրերի կառավարման և գնումների հաշվետվողականության և LSFinance (ԳԳՕ) համակարգերի տվյալների համադրման ծառայություններ*	դրամ	38500000	1	ք. Երևան, Մ. Ադամյան 1	Ծառայությունների մատուցման վերջնաժամկետ է սահմանվում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառվելուց հետո 150 օրացուցային օրվա ընթացքում

1. * Գնումների պլանի փոփոխությունների համադրում

Գնումների պլանի (այսուհետ՝ ԳՊ) փոփոխված տվյալները էլեկտրոնային գնումների պլանավորմա, պայմանագրերի կառավարման և գնումների հաշվետվողականության (այսուհետ՝PPCM) և LSFinance (ԳԳՕ) համակարգերի տվյալների համադրման ենթահամակարգի միջոցով PPCM համակարգից կուղարկվեն LSFinance (ԳԳՕ) համակարգ, որտեղ այդ տվյալները ավտոմատ կերպով կստուգվեն և սխալների բացակայության դեպքում կընդունվեն LSFinance (ԳԳՕ) համակարգի կողմից: Տվյալների ընդունումից և ՀՀ ֆինանսների նախարարության համապատասխան ստորաբաժանման (այսուհետ՝ ՖՆ ԳԳՀԲ) վերջնական հաստատողի հաստատումից հետո երկու համակարգերում միաժամանակ կկատարվեն գնումների պլանում կատարվող անհրաժեշտ բոլոր փոփոխությունները:

Գծագիր 1: Տվյալների փոխանակում PPCM և LSFinance (ԳԳՕ) համակարգերի միջև



Ստորև ներկայացվում է համակարգերում առաջարկվող փոփոխությունների ընդհանուր նկարագրությունը համակարգի բիզնես տրամաբանության տեսանկյունից:

1. ՖՆ ԳԳՀԲ նախնական հաստատողը բացում է ԳՊ փոփոխման հայտը՝ PPCM համակարգում:
2. Հաստատում կամ մերժում է ԳՊ փոփոխման հայտը: Հաստատման դեպքում անցում է կատարվում քայլ 4-ին: Մերժման դեպքում՝ քայլ 3-ին:
3. PPCM համակարգը ԳՊ վարողի համար ստեղծում է առաջադրանք՝ փոփոխման հայտի մերժման վերաբերյալ:
4. PPCM և LSFinance (ԳԳՕ) համակարգերի տվյալների համադրման ենթահամակարգը ստանում է հաստատված տվյալները և ուղարկում է LSFinance (ԳԳՕ) համակարգ՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական հոդվածների:
5. LSFinance (ԳԳՕ) համակարգը ստանում է տվյալները, մշակում է ըստ հոդվածների և յուրաքանչյուր հոդվածի համար տալիս է առանձին պատասխան: Եթե տվյալ հայտում առնվազն 1 հոդված մերժվում է, և LSFinance (ԳԳՕ) և PPCM համակարգերում ամբողջ հայտը մերժվում է:
6. LSFinance (ԳԳՕ) համակարգը ընդունում է տվյալները: Ընդունման և մերժման դեպքերում անցում է կատարվում քայլ 7-ին:
7. PPCM և LSFinance (ԳԳՕ) համակարգերի տվյալների համադրման ենթահամակարգը ստանում է տվյալները և ուղարկում է PPCM համակարգ: Ընդունված տվյալների դեպքում անցում է կատարվում քայլ 8-ին: Տվյալները ընդունված չլինելու դեպքում՝ քայլ 9-ին:
8. PPCM համակարգը կատարում է համապատասխան փոփոխություններ ԳՊ-ում:
9. PPCM համակարգը առաջադրանք է ստեղծում ՖՆ ԳԳՀԲ վերջնական հաստատողի համար տվյալների ընդունված չլինելու վերաբերյալ:

10. Մերժում է ԳՊ փոփոխման հայտը, որից հետո անցում է կատարվում քայլ 3-ին:

2. PPCM համակարգից LSFinance (ԳԳՕ) համակարգ պայմանագրի ներմուծում

ARMEPS համակարգում մրցույթի շնորհումից հետո PPCM համակարգում գեներացվում է պայմանագրի սևագիր տարբերակը: Գնումների համակարգողը (այսուհետ՝ ԳՀ) կլրացնի պայմանագրի անհրաժեշտ դաշտերը և կպահպանի կատարված փոփոխությունները: Որից հետո կուղարկի պայմանագիրը հաստատման: PPCM համակարգում հաստատման բոլոր փուլերն անցնելուց հետո համակարգերի տվյալների համադրման ենթահամակարգը կստանա պայմանագրի տվյալները և այն կուղարկի LSFinance (ԳԳՕ) համակարգ:

Գծագիր 2: PPCM համակարգից LSFinance համակարգ պայմանագրի ներմուծում



Ստորև ներկայացվում է համակարգերում առաջարկվող փոփոխությունների ընդհանուր նկարագրությունը համակարգի բիզնես տրամաբանության տեսանկյունից:

1. ԳՀ-ը PPCM համակարգում լրացնում է պայմանագրի դաշտերը, պահպանում է փոփոխությունները և ուղարկում հաստատման:
2. ԳՀ ղեկավարը ստանում է առաջադրանք պայմանագրի հաստատման վերաբերյալ:
3. ԳՀ ղեկավարը հաստատում կամ մերժում է պայմանագիրը: Հաստատման դեպքում անցում է կատարվում քայլ 4-ին: Մերժման դեպքում՝ քայլ 14-ին:
4. Պատվիրատուի ադմինը ստանում է առաջադրանք պայմանագրի հաստատման վերաբերյալ:
5. Պատվիրատուի ադմինը հաստատում կամ մերժում է պայմանագիրը: Հաստատման դեպքում անցում է կատարվում քայլ 6-ին: Մերժման դեպքում՝ քայլ 14-ին:
6. ՖՆ ԳԳՀԲ նախնական հաստատողը ստանում է առաջադրանք պայմանագրի հաստատման վերաբերյալ:
7. ՖՆ ԳԳՀԲ նախնական հաստատողը հաստատում կամ մերժում է պայմանագիրը: Հաստատման և մերժման դեպքում անցում է կատարվում քայլ 8-ին:
8. ՖՆ ԳԳՀԲ վերջնական հաստատողը ստանում է առաջադրանք պայմանագրի հաստատման վերաբերյալ:
9. ՖՆ ԳԳՀԲ վերջնական հաստատողը հաստատում կամ մերժում է պայմանագիրը: Հաստատման դեպքում անցում է կատարվում քայլ 10-ին: Մերժման դեպքում՝ քայլ 14-ին:

10. PPCM և LSFinance (ԳԳՕ) համակարգերի տվյալների համադրման ենթահամակարգը ստանում է տվյալները և կցված pdf ֆայլով ուղարկում LSFinance (ԳԳՕ) համակարգ:

11. LSFinance (ԳԳՕ) համակարգը ընդունում կամ մերժում է պայմանագրի տվյալները: Ընդունման դեպքում LSFinance (ԳԳՕ) համակարգը գեներացնում է տվյալ պայմանագրի համար ունիկալ կոդ, որը տրամադրում է PPCM համակարգին տվյալ պայմանագրի հետագա փոփոխությունների համար: Տվյալների ճշտության դեպքում անցում է կատարվում քայլ 12-ին: Սխալների առկայության դեպքում՝ քայլ 13-ին:

11.1 Պայմանագրի փոփոխության դեպքում PPCM համակարգից բացի պայմանագրի փոփոխված տվյալներից LSFinance (ԳԳՕ) համակարգ տրամադրվում է նաև նախկինում LSFinance (ԳԳՕ) համակարգում գեներացված տվյալ պայմանագրի ունիկալ կոդը:

12. ԳՊ-ում պայմանագրի գումարի չափով հաշվարկում է ծախս:

13. PPCM և LSFinance(ԳԳՕ) համակարգերի տվյալների համադրման ենթահամակարգը ստանում է չընդունված տվյալները և ուղարկում PPCM համակարգ:

14. ԳՀ-ը ստանում է ծանուցում մերժման վերաբերյալ:

Աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառվելուց հետո 150 օրացուցային օրվա ընթացքում: Երաշխիքային ժամկետ է սահմանվում 15/04/2019թ.:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ֆինանսների նախարարություն
Ք. Երևան, Մ. Ադամյան 1
ՀՎՀՀ 02629081
Հ/Հ 900011017101
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավար

_____ Գևորգյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

<<ԼՍՈՖՏ>> ՍՊԸ
Ք. Երևան Բյուզանդի 1/3 7-րդ հարկ
ՀՎՀՀ 01202055
ՀՀ24100023278500
<Յունիբանկ> ՓԲԸ
Տնօրեն՝

_____ Լ. Հալայան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
20 դեկտեմբեր 2017թ. կնքված
ՀՀ ՖՆ ՄԱԾՁԲ-17/20 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017թ-ին՝ ամիսների, այդ թվում												ընդամենը
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	72261160/25	էլեկտրոնային գնումների պլանավորման, պայմանագրերի կառավարման և գնումների հաշվետվողականության և LSFinance (ԳԳՕ) համակարգերի տվյալների համադրման ծառայություններ												38500000	38500000

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ֆինանսների նախարարություն
Ք. Երևան, Մ. Ադամյան 1
ՀՎՀՀ 02629081
Հ/Հ 900011017101
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավար

_____ Է. Գևորգյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

<<ԼՍՈՖՏ>> ՍՊԸ
Ք. Երևան Բյուզանդի 1/3 7-րդ հարկ
ՀՎՀՀ 01202055
ՀՀ24100023278500
<Յունիբանկ> ՓԲԸ
Տնօրեն՝

_____ Լ. Լալայան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
20 Դեկտեմբեր 2017 թ. կնքված
ՀՀ ՖՆ ՄԱԾՁԲ-17/20 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ 18 դեկտեմբերի 2017թ
Պայմանագրի համարը՝
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ թ. դուրս գված N ---------- հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
20 Դեկտեմբեր 2017թ. կնքված
ՀՀ ՖՆ ՄԱԾՁԲ-17/20 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՅՈՒՆԻԲԱՆԿ

0025 ՀՀ, Երևան, Չարենցի 12, թիվ 53, 1-5
Հեռ. (374 10) 59 55 55
Ֆաքս. (374 10) 555 140
e-mail: unibank@unibank.am
www.unibank.am
Տելեքս. 243313 UNIJAM

1-5, 53, 12 Charents str., Yerevan, Armenia 0025
Tel. (374 10)59 55 55
Fax. (374 10) 555 140
e-mail: unibank@unibank.am
www.unibank.am
Telex. 243313 UNIJAM

«20» 12 2017թ.

N 2234

ԵՐԱՇԽԻՔ N Ե 004-896

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ՀՀ Ֆինանսների նախարարության (այսուհետ՝ բենեֆիցիար) և <<LՍՈՖՏ>> ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) հետ պետության կարիքների համար էլեկտրոնային գնումների պլանավորման, պայմանագրերի կառավարման և գնումների հաշվետվողականության և LSFINANCE /ԳԳՕ/ համակարգերի տվյալների համադրման ծառայությունների մատուցման պետական գնման թիվ ՀՀ ՖՆ ՄԱԾՁԲ-17/20 պայմանագրի կնքման (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) համար:
2. Երաշխիքով <<Յունիբանկ>> ԲԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 38,500,000 (երեսունութ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի կողմից ներկայացված հաշվեհամարին:
3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:
4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:
5. Երաշխիքը գործում է 20.12.2017թ. /երկու հազար տասնյոթ թվականի դեկտեմբերի քսանից/ մինչև 30.06.2018թ. /երկու հազար տասնութ թվականի հունիսի երեսունը/ ներառյալ:
6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝
   1) Բանկային երաշխիքի բնօրինակ
   2) Պայմանագիրը չկատարելու հետ կապված փաստաթղթեր:
7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը 3 /երեք/ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:
8. Այն դեպքում, երբ բենեֆիցիարը ներկայացրել է սույն երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ և կից փաստաթղթեր, իսկ երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում երաշխիքի գումարն ամբողջությամբ, ապա բենեֆիցիարն իրավունք ունի երաշխիք տվող անձի բանկից պահանջելու երաշխիք տվող անձի հաշվից իրեն վճարել երաշխիքի գումարը՝ ներկայացնելով սույն երաշխիքի իր օրինակը:
9. Այն դեպքում, երբ բենեֆիցիարը ներկայացրել է սույն երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ և կից փաստաթղթեր, իսկ երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում երաշխիքի գումարն ամբողջությամբ,

այդ թվում՝ երբ բենեֆիցիարի կողմից սույն երաշխիքի 8-րդ կետում ամրագրված իր իրավունքից օգտվելու դեպքում՝ երաշխիք տվող անձի բանկային հաշվում առկա չեն բավարար միջոցներ, ապա երաշխիք տվող անձը, իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար բենեֆիցիարին վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար՝ 0.01%-ի չափով: Ընդ որում, երաշխիքի գումարի վճարման իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար երաշխիք տվող անձի պատասխանատվությունը չի սահմանափակվում երաշխիքի գումարով:

10. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

11. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

12. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

13. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վարչության նախագահի ժ/պ՝ Մ.Հակոբյան

Ֆինանսական տնօրեն - Գլխավոր հաշվապահ՝ Գ. Գրիգորյան